

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ

Դիստորֆիաներ, բնորոշումը և հիմնական ձևերը: Նեկրոզ /մեռուկ/, պատճառները, տեսակները, մորֆոլոգիան և ելքը: Ապոպտոզ: Երակային գերարյունություն, բնորոշումը, մորֆոլոգիան և ելքը: Արյունահոսություն, տեսակները, մեխանիզմը և ելքը: Թրոմբոզ, առաջացման պատճառները, մորֆոլոգիան և ելքը: Թրոմբո-հեմոռագիկ համախտանիշ /արյան տարածված ներանոթային մակարդում/: Էմբոլիա, ձևերը, մորֆոլոգիան, հետևանքները: Ընդհանուր տեղեկություններ բորբոքման մասին: Բորբոքման էությունը, մորֆոլոգիական նշանները, նշանակությունը:

Ուռուցքների դասակարգումը, ընդհանուր մորֆոլոգիան: Հիպերտրոֆիա /գերած/, ձևերը, պատճառները, մորֆոլոգիան և ելքը: Հեմոբլաստոզներ, առանձին տեսակների մորֆոլոգիան: Լիմֆոգրանուլեմատոզ: Աթերոսկլերոզ, էթիոլոգիան, մորֆոլոգիան: Հիպերտոնիկ հիվանդություն, ախտաբանական անատոմիան: Սրտի իշեմիկ հիվանդություն:

Ռեմատիկ հիվանդություններ, պաթոգենեզի և մորֆոգենեզի հարցերը:

Ռեմատիզմի էությունը, հիմնական կլինիկաանատոմիական ձևերը: Ընդհանուր մորֆոլոգիան: Համակարգային կարմիր գայլախտ: Ռեմատոիդ արթրիտ: Կրուպոզ թոքաբորբ: Բրոնխոպնևմոնիաներ: Թոքերի էմֆիզեմա /փքանք/, հիվանդության զարգացման դինամիկան և ելքը: Թոքերի խրոնիկական, ոչ յուրահատուկ հիվանդություններ:

Թոքերի քազցկեղ, անատոմիական և հյուսվածքաբանական ձևերը, բարդությունները: Գաստրիտներ, ձևերը, առանձին տեսակների մորֆոլոգիան:

Ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցային հիվանդություն: Ապենդիցիտ, դասակարգումը, առանձին ձևերի մորֆոլոգիան: Հեպատիտներ:

Լյարդի տոքսիկ դիստրոֆիա: Լյարդի ցիռոզներ, պատճառները, ախտաբանական անատոմիան, ելքը:

Գլոմեռուլոնեֆրիտ, դասակարգումը, առանձին ձևերի մորֆոլոգիան:

Տուբուլոպաթիաներ, երիկամային սուր անբավարարություն:

Երիկամային խրոնիկական անբավարարություն /ուրեմիա/, առաջացման պատճառները, ախտաբանական անատոմիան:

Գրիպ: Կարմրուկ, կլինիկաձևաբանական բնութագիրը:

Դիֆթերիա, պատճառագիտությունը, ախտաձագումը, ախտաանատոմիական փոփոխությունները: Որովայնային տիֆ: Դիզենտերիա /շիգելոզ/:

Ամիոբիոզ: Քուպեշ, շրջանները, երկրորդային շրջանի բարդությունները:

Մալարիա: Բրուցելոզ: Ձեռք բերովի իմունային անբավարարության համախտանիշ /ՁԻԱՀ/: Խուլերա: Հետադարձ տիֆ: Մենինգոկոկային վարակ: Բժավոր տիֆ: Պոլիոմիելիտ: Տուբերկուլոզ: Սիֆիլիս, փուլերը, մորֆոլոգիան: Սեպսիս, ախտաբանական անատոմիան, կլինիկաանատոմիական ձևերը:

ԴԱՏԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Դատական բժշկության իրավաբանական և կազմակերպչական հիմունքները.

Բժիշկ-մասնագետի և դատաբժշկական փորձագետի իրավունքները և պարտականությունները: Դեպքի վայրում բժիշկ-մասնագետի և դատաբժշկական փորձագետի մասնակցությունը և իրավասությունները:

Մահաբանություն. Դիակային բժերը և նրանց դատաբժշկական նշանակությունը:

Դիակային փայտացումը և նրանց դատաբժշկական նշանակությունը: Դիակի նեխման պայմանները, նրա դատաբժշկական նշանակությունը:

Վնասվածքաբանություն. Վնասնաճքաբանության /տրավմատիզմի/ սահմանումը և նրա տեսակները: Վնասվածքների բժշկական բնութագիրը, առաջացման մեխանիզմը և դատաբժշկական նշանակությունը:

Մեխանիկական վնասվածքներից առաջացած մահվան պատճառները: Կրծքավանդակի օդահավաքի և օդային խցանման (էմբոլիայի) որոշման փորձերը: Կենդանության օրոք և հետմահու առաջացած մեխանիկական վնասվածքների տարբերակիչ ախտորոշումը: Վնասվածքների բնութաիրը բարձունքից վայր ընկնելիս: Ավտոմոբիլային փոխադրամիջոցներից առաջացած վնասվածքների առանձնահատկությունները: Գծային փոխադրամիջոցներից

առաջացած վնասվածքների տեսակները և առանձնահատկությունները: Օդաչվական վնասվածքների առանձնահատկությունները և դատաբժշկական փորձաքննությունը:

Ծակող, ծակող-կտրող և կտտրող գործիքներով հասցված վնասվածքների առանձնահատկությունները: Հրազենային կրակոցի գնդակի ծակող, սեպածև, ծեծվածքային և պատռվածքային վնասվածքների առաջացման մեխանիզմը: Հրազենային կրակոցի ուղղության որոշումը:

Հրազենային կրակոցի հեռավորության որոշումը: Ն.Վ.Վինոգրադովի բացատրությունը: Հրազենային ընդհուպ կրակոցի տարատեսակների դատաբժշկական փորձաքննությունը: Հրազենային վնասվածքի մուտքի և ելքի անցքերի տարբերակիչ ախտորոշումը: Մոտ տարածությունից կատարված կրակոցի գործոնների դատաբժշկական նշանակությունը:

Կտտորակային զենքերի կրակոցից առաջացած վնասնածքների առանձնահատկությունները, կրակոցի հեռավորության որոշումը: Հրազենային գնդակային և կտտորակային զենքերից կատարված կրակոցների հաջորդականության որոշումը:

Մեխանիկական շնչահեղձում. Մեխանիկական շնչահեղձման դատաբժշկական դասակարգումը և բնորոշ դիակային երևույթները: Մեխանիկական շնչահեղձման մինչ մահվան փուլերը: Կախում և խեղդում օդով, խեղդում ձեռքերով: Դրանց հետևանքով առաջացած մահվան մեխանիզմը և դատաբժշկական տարբերակիչ ախտորոշումը:

Կենդանության օրոք և հետմահու առաջացած ճմլման ակոսի դատաբժշկական փորձաքննությունը: Կրծքավանդակի և որովայնի սեղմման ժամանակ շնչահեղձման ընթացքի առանձնահատկությունները և դիահերձման պատկերը: Օտար մարմիններով շնչական անցքերի, սորուն մարմիններով և փսխման զանգվածներով շնչական ուղիների փակումից առաջացած մահվան դատաբժշկական ախտորոշումը:

Ջրահեղձման տեսակները, մեխանիզմը և դատաբժշկական ախտորոշումը: Դիակի ջրում գտնվելու տևողության որոշումը: Ջրից հանված դիակների փորձաքննության առանձնահատկությունները:

Ջրահեղձման ախտորոշման լաբորատոր եղանակները:

Վնասվածքները եվ մահը արտաքին մթնոլորտային գործոններից. Յածր ջերմաստիճանների տեղային և ընդհանուր ներգործությունից առաջացած մահվան պատճառները, նրանց դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները: Բարձր ջերմաստիճանների տեղային և ընդհանուր ներգործության հետևանքով մարմնական վնասվածքներից առաջացած մահվան պատճառները: Կենդանության օրոք կրակի մեջ ընկնելուց առաջացած վնասվածքների ախտորոշման եղանակները: Մարմնի այրվածքային մակերեսի որոշումը: Էլեկտրական հոսանքի ներգործության պայմանները և մահվան մեխանիզմը: Էլեկտրանիշ: Էլեկտրահարությունից մահացած անձանց դիակների դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները: Հիվանդագին երևույթները և մահը ծայրահեղ մթնոլորտային ճնշումներից:

Թունաբանություն. Թույնի և թունավորման հասկացության սահմանումը: Թույնի ներգործության պայմանները: Թունավորման կասկածի դեպքում դիակի դատաբժշկական փորձաքննության և դեպքի վայրի ուսումնասիրության առանձնահատկությունները: Թույնի օրգանիզմ ներմուծման և օրգանիզմից հեռացման ուղիները: Թույնի ազդեցությունը՝ կախված օրգանիզմ ներմուծման և հեռացման ուղիներից:

Թունավորման կասկածի դեպքում նյութերի վերցման կարգը՝ տարբեր լրացուցիչ լաբորատոր ուսումնասիրությունների համար: Թունավորման կասկածի դեպքում դիակի օրգանների դատաքիմիական ուսումնասիրության դրական և բացասական արդյունքների դատաբժշկական գնահատականը: Թունավորում հիմքերով և թթուներով, նրանց տարբերակիչ ախտորոշումը: Թունավորում ածխածնի մոնօքսիդով և մեթիեմոգլոբին առաջացնող թույներով, դիահեղձման պատկերը և ուսումնասիրության լաբորատոր եղանակները: Թունավորում սնդիկի

անօրգանական միացություններով /սուլեմա/: Թունավորում մկնդեղով, կլինիկան և դիախերձման պատկերը: Թունավորում կապտաթթվի միացություններով: Քնաբեր դեղորայքով և թմրանյութերով թունավորման կասկածի դեպքում դիակի դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները: Թունավորում էթանոլով, կլինիկան և դիախերձման պատկերը: Թունավորում մեթանոլով, կլինիկան և դիախերձման պատկերը: Սննդային թունավորումների դասակարգումը: Թունավորում սնկերով /կարմիր ճանճապան, դժգոյն սունկ, մորկեղասունկ/, նրանց դատաբժշկական ախտորոշումը: Թունավորում բոտոլոտոքսինով, կլինիկան և դիախերձման պատկերը: Թունավորում թունաքիմիկատներով /քլոր-, ֆոսֆոր-, սնդիկօրգանական միացություններով/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդանյան Շ.Ա., Նազարեթյան Կ.Լ., Դատական բժշկություն: Երևան, "Լույս" հրատարակչություն, 1995, 528 էգ:
2. Վարդազարյան Ն.Դ. Ախտաբանական անատոմիա. Երևան, 2003.
3. Դիակի դատաբժշկական փորձաքննության տեխնիկան և փորձագետի եզրակացության հիմնավորումը: Վարդանյան Շ.Ա., Նազարեթյան Կ.Լ. Երևան, 1997:
4. Վարդանյան Շ.Ա., Դատական բժշկություն: Երևան, 2010:
5. Авдеев М.И. Курс судебной медицины. М, 1959.
6. Авдеев М.И. Судебно-медицинская экспертиза живых лиц. М,1968.
7. Громов А.П. Курс лекций по судебной медицине. М, 1970.
8. Громов А.П. Практикум по судебной медицине. М, 1970.
9. Громов А.П., Науменко В.П. Судебно-медицинская травматология. М., Медицина, 1977.
10. Бережной Р.В. и др. Руководство по судебно-медицинской экспертизе отравлений. М., Медицина, 1980.
11. Диагностикум механизмов и морфологии переломов при тупой травме скелета. Под ррд. В.Н.Крюкова и др. Новосибирск, 2011.
12. Пиголкин Ю.В. и др. Судебная медицина. Учебник. М., 2011.
13. Попов В.Л. Учебник судебной медицины. С-Пб, 2002.
14. Попов В.Л. Судебная медицина. Практикум. С-Пб, 2001.
15. Попов В.Л. и др. Судебно-медицинская баллистика. С-Пб, 2002.

16. Смольянинов В.М./ред./ Судебная медицина. М., Медицина, 1982.
17. Солохин Л.А. Судебно-медицинская экспертиза в случаях автомобильной травмы. М., Медицина, 1981.
18. Струков А.и., Серов В.В. Патологическая анатомия. М., 1979.
19. Судебная медицина. Учебник под.ред. С.Ф.Щадрина и др. М., 2005.
20. Томилин В.В. Судебная медицина. М,2001.
21. Хохлов В.В. Руководство по судебной медицине. М, 2003.
22. Чистович А.П. /ред./ - Патологическая анатомия. М., Медгиз, 1963.